ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(14 փետրվարի 2020 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ հավատավոր քույրեր եւ եղբայրներ,

Ընդհանրապես մարդիկ ցանկանում են երկար ապրել, կյանքի ընթացքում բազում նպատակներ են ունենում իրագործելու։ Երբեմն այդ նպատակներով այնքան են տարվում, որ կյանքը գալիս անցնում է նրանց կողքով ու մնում չապրված։ Մարդիկ ցանկանում եմ ընտանիք կազմել եւ երջանիկ կյանք ունենալ, իրենց թոռներին տեսնել, նրանց հաջողություններով ուրախանալ։ Իսկ ոմանք էլ իրենց կյանքում այլ նպատակներ են ունենում՝ իրենց անձը միայն Աստծու հետ կապելով։

Երբ մեր Տեր Հիսուս Քրիստոս արդեն քառասուն օրական էր, Ս. Կույս Աստվածածինը եւ Հովսեփը նրան տաճար տարան, որովհետեւ հրեական օրենքն այդպես էր պահանջում. պետք է տաներին արու զավակի քառասուն օրը լրանալուն պես եւ մի զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագ զոհաբերեին Աստծուն. այդպես նաեւ մայրը պետք է մաքրվեր, որով եւ հրեական օրենքը կատարած կլիներին։

Ահա տաճարում կար մեկը, որ երկար կյանք էր ուզում ունենալ եւ նպատակ էր դրել տեսնել աշխարհի փրկությունը. ցանկանում էր տեսնել եւ նոր միայն մեռնել։ Հայտնի է, որ Սիմեոն ծերունին երկար է ապրել։ Ըստ ավանդության՝ նա Աստվածաշունչ մատյանի՝ Հին Կտակարանի թարգմանիչներից մեկն էր, հետեւաբար նրա կյանքի նպատակն է եղել իր աչքով տեսնել Քրիստոսին. հավանաբար, երբ ընթերցում էր Եսայու մարգարեության է. գլուխը, այնտեղ այդ խոստումը կար, թե՝ «Ահա

կույսը պիտի հղիանա եւ մի որդի պիտի ծնի, եւ նրան պիտի կոչեն Էմմանուել, որ նշանակում է՝ Աստված մեզ հետ» (Ես. է. 14)։ Ահա սրանով է, որ Սիմեոն ծերունին ապրում էր, սա էր նրա կյանքի նպատակը եւ երկարակեցության պատճառը։ Ինչպես Օգոստինոս Երանելին է ասում իր աղոթքում. «Դու ստեղծել ես մեզ Քեզ համար, Տե՛ր բարերար, եւ մեր սիրտը հանգիստ չի ունենում, մինչեւ որ այն չի հանգչում Քո գրկում»։

Այսօրվա սուրբգրային մեր ընթերցումները հետաքրքիր կերպով ներկայացնում են ոչ թե «տյառնընդառաջ» բառի մեր պատկերացրած բացատրությունը, այսինքն՝ Տիրոջն ընդառաջ գնալը, այլ, ըստ էության, Տերն է գալիս մարդկանց ընդառաջ։ Երբ ընթերցում ենք Պողոս առաքյալի այսօրվա թուղթը, տեսնում ենք, որ իսկապես մենք այլեւս ծառա չենք, այլ Աստծու զավակն ենք, հետեւաբար Աստված գալիս է մեզ ընդառաջ, որպեսզի Իր որդեգրությունը տա մեզ (Գաղ. Գ. 24–29)։

Ավետարանական ընթերցումը պատմում է, թե ինչպես Տեր Հիսուս Քրիստոս, դեռ տասներկու տարեկան լինելով, տաճար է գնում եւ այնտեղ խոսում է վարդապետների հետ ու հարցեր տալիս ուսուցիչներին (Ղուկ. Բ. 41–52)։ Ուրեմն՝ Տեր Հիսուս երբեք չի սպասում, որ նախ մենք գնանք Իրեն ընդառաջ, այլ Ինքն է գալիս մեզ ընդառաջ։ Ահա այս հույսն էր, որ թեւածում էր տաճարում, ուր Սիմեոն ծերունին եւ Աննա մարգարեուհին սպասում էին Հիսուս Քրիստոսի՝ աշխարհի փրկչի գալուն։ Եւ երբ այդ լույսը տաճար մտավ, այդ պահին Սիմեոն ծերունին տեսավ աշխարհի փրկությունը՝ այն լույսը, որով պետք է աշխարհը լուսավորվեր։ Եւ իր գիրկն առնելով մանկանը՝ ասաց. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությա՛մբ արձակիր քո ծառային՝ ըստ քո խոսքի, որովհետեւ աչքերս տեսան փրկությունը քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար եւ փառք՝ Իսրայելի քո ժողովրդի համար» (Ղուկ. Բ. 29–32)։

Եւ ահա այսօր Քրիստոս գալիս է տաճար։ Սակայն գալիս է որպես քառասուն օրական մի մանուկ, որը դեռ հասակ պիտի առնի։ Ուրեմն ինչպե՞ս պիտի փրկի աշխարհն այդ քառասուն օրական մանուկը։ Ահա այստեղ է, որ չափազանց կարեւորված է Ս. Կույսի՝ Մարիամ Աստվածածնի դերը, որովհետեւ Քրիստոսին նա իր սիրով սնուցանեց եւ այն տարիքին հասցրեց, երբ Քրիստոս սկսեց Իր առաքելությունը։

Սիրելինե՛ր, այսօր քառասուն օրական Քրիստոս եկել է տաճար եւ մեզանից է սպասում, որ փայփայենք Իրեն, պահենք Իրեն մեր սրտի

տաճարների մեջ, որպեսզի Իր փրկությունը միայն անհարազատ պարգեւ չլինի, այլ մեր միջոցով մարդիկ հասկանան, թե ինչ է փրկությունը, ինչ է այդ սերը, որի մասին Աստված ասում է եւ ի լրումն ժամանակի՝ Իր զավակին է տալիս աշխարհի փրկության համար։ Սիմեոն ծերունին այս զգացումով է, որ սպասում էր աշխարհի Փրկչին եւ տեսավ Նրան։ Ծերունու արտաբերած խոսքերն այսօր եկեղեցիներում հնչում են ժամերգության ժամանակ՝ որպես հույս փրկության։ «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակիր քո ծառային՝ ըստ քո խոսքի, որովհետեւ աչքերս տեսան փրկությունը քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ» (Ղուկ. Բ. 29։31)։ Այս խոսքով, սիրելինե՛ր, մենք ունենք Քրիստոսի ներկայությունը մեր կյանքում, սակայն արդյոք ունե՞նք ցանկություն՝ որդեգրվելու Աստծուն։ Մկրտության ժամանակ, երբ մենք մեղքերի ծառայությունից մաքրվում ենք, Քրիստոսի միջոցով ընդունում ենք Հայր Աստծու որդեգրությունը։ Սա պարգեւ է մեր Հոր կողմից, որին արժանի պիտի դառնանք մեր ողջ կյանքի ընթացքում։

Եւ ահա այսօր մեր Տեր Հիսուս Քրիստոս առաջին քայլն է անում եւ գալիս է մեր կյանք, մեր տաճարներ։ Հաջորդ քայլը մերն է։ Մենք պե՞տք է ապրենք Սիմեոն ծերունու՝ մեր կյանքում Աստծուն գեթ մեկ անգամ դեմ հանդիման տեսնելու հույսով՝ հաշվի առնելով, որ Տերն արդեն իսկ ընդառաջ է եկել մեզ, թե՞ այլ է մեր կյանքի նպատակը։

Յուրաքանչյուր մարդ այս ապրումն ունենալու համար հույսի պետք ունի։ Չեմ պատկերացնում, թե Սիմեոն ծերունին ինչպե՞ս պիտի կարողանար սպասել այդքան տարիներ, եթե իր մեջ հույսը չունենար՝ Քրիստոսի գալստյան։ Կյանքում զանազան դեպքեր մեզ հուսահատության են տանում, մեզ մշտապես փորձում են հեռու պահել Աստծու հանդեպ հույսից, հետեւաբար Սիմեոն ծերունու օրինակը, թե պետք է սպասել այնքան, որքան պահանջվում է, որ Աստված մեկ օր պետք է գա եւ հայտնվի, մեզ համար ներշնչում ու վստահություն պիտի լինի՝ հարատեւելու հույսի մեջ։

Հեղինակներից մեկը՝ Ժան Պոլ Սարտրը, որը իր ողջ կյանքում հայտնի էր որպես աթեիստ՝ Աստծուն չընդունող, երբ արդեն մահվան մահճում է լինում, վախ է զգում։ Նա մեծապես տիրապետում էր փիլիսոփայական գիտությանը։ Եւ ահա իր կյանքի վերջում, զգալով, որ իր ամբարած ողջ իմաստասիրությունն ու գիտությունն այլեւս պետք չեն իրեն, ասում է. «Ինչպե՞ս պետք է այս ճշմարտության մեջ մեռնեմ։ Պետք է իմացած

ճշմարտությունս ետ տամ եւ դրա փոխարեն հույս ստանամ»։ Սակայն երբ մտածում է հույսի մասին, ասում է. «Չեմ կարող պարզապես հույս ունենալ, քանզի հույսը հիմք է ունենում...»։

Մեզ համար, սիրելինե՛ր, հստակ է, որ այդ հույսի հիմքն Աստված է։ Հույսի հիմքը նա է, ով բաշխում է այն, եւ եթե Աստված չունենանք մեր մեջ, կյանքը կվերածվի լոկ գոյատեւման։

Մեր աշխարհն այսօր մեծ քաղց ունի հույսի, աստվածայի՛ն հույսի, ինչը ոչ միայն մեզ կլցնի լավատեսությամբ ապագայի հանդեպ, այլ նաեւ կզորացնի մեզ ներկա կյանքում։

Մի մարդ մահացու հիվանդ է լինում եւ պարբերաբար գնում է հիվանդանոց՝ ստուգվելու։ Հերթական անգամ գնում է ստուգման, եւ հերթապահ բժիշկը, որ նոր է նշանակված լինում այդ հիվանդանոցում, ասում է. «Դուք հավանաբար գիտեք, որ ձեր վիճակը շատ ծանր է, եւ մինչեւ տարեվերջ չեք ապրի»։ Հիվանդը, թեեւ գիտեր իր հիվանդության մասին, հեռանալիս մոտենում է տնօրենին եւ ասում. «Գիտե՛ք՝ նոր ընդունված բժիշկը հենց նոր ամբողջ հույսս ի չիք դարձրեց, կոտրեց բոլոր նպատակներս ու հույսերս»։ Եւ սկսում է լալ։ Հիվանդանոցի տնօրենը պատասխանում է. «Այո՛, Դուք ճիշտ եք, այդպես է, բայց այս պարագայում չե՞ք կարծում արդյոք, որ ժամանակն է նո՛ր հույս փնտրել ձեզ համար»։

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, կարծում եմ, որ եթե հույսն իսկական է եւ ճշմարիտ, Հիսուս Քրիստոսից է բխում, այդ հույսը երբեք չի կարող մեզ հուսահատության հասցնել, որովհետեւ հույսն ուղղակի Աստծու խոստման հանդեպ մեր կատարյալ վստահությունն է՝ անկախ մեր կյանքում տեղի ունեցող որեւէ իրողությունից։ Եթե մի պահ մեր կյանքի ընթացքում կարծենք, թե բավ է, մեր հույսն այլեւս վերացավ, ուրեմն՝ հիշե՛ք այդ խոսքը՝ «Ժամանակն է նո՛ր հույս փնտրելու ձեզ համար»։ Քրիստոսից ստացած հույսը մշտանորոգ է, այն երբեք չի սասանվում։

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, Քրիստոսի տաճար գալը տոնախմբելու ուրախությամբ լցված՝ մեր Եկեղեցին այս օրը հռչակել է նաեւ նորապսակների օրհնության օր։ Սիրահար զույգերը, որոնք ընտանիք են կազմել, պետք է իրար մխիթարեն եւ այդ հույսով լցնեն միմյանց կյանքը՝ այն դարձնելով միասնական ճամփորդություն դեպի ավելի կատարյալ աստվածաճանաչություն, դեպի հուսառատ երանություն։

Անկախ մեր կարգից ու աստիճանից, անկախ մեր սոցիալական կարգավիճակից՝ Աստված թող անպակաս պահի մեր սրտի մեջ Իր հանդեպ հույսը, որովհետեւ այդ հույսի միջոցով է, որ կարող ենք քրիստոնեական կյանքի մեջ հրաշքներ գործել, այդ հույսի միջոցով է, որ կարող ենք այնքան սպասել, մինչեւ որ մենք էլ ասենք՝ «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությա՛մբ արձակիր քո ծառային՝ ըստ քո խոսքի, որովհետեւ աչքերս տեսան փրկությունը քո» (Ղուկ. Բ. 29)։

Աստծու սերը, ողորմությունն ու մխիթարությունը թող հարատեւեն մեզ՝ ամենքիս հետ. այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն։